ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Ինվիա Ինվեսթմենթս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի 08.04.2026թ. արտահերթ ժողովի թիվ 26/04 արձանագրությամբ

Anahit Shakaryan

Digitally signed by Anahit Shakaryan
DN: c=AM, st=Yerevan, l=Yerevan, o=INVIA INVESTMENTS CJSC, email=shakaryan@inviabroker.am, cn=Anahit Shakaryan
Date: 2026.05.27 12:52:46 +04'00'

Գործադիր տնօրեն՝

Անահիտ Շաքարյան

ստորագրություն

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ Կենտրոնական բանկում

--/--/----թ. թիվ ---------որոշմամբ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

Մարտին Գալստյան

Digitally signed by Martin Galstyan
Date: 2026.06.09 11:53:30 AMT
Reason: Գրանցված է 03.06.2026թ.

ստորագրություն

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Ինվիա Ինվեսթմենթս»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրություն)

APPROVED BY

The minutes N26/04 as of 08/04/2026 of the Extraordinary Meeting of the Shareholders of “Invia Investments”CJSC

Executive Director
Anahit Shakaryan

Anahit Shakaryan
Digitally signed by Anahit Shakaryan
DN: c=AM, st=Yerevan, l=Yerevan, o=INVIA INVESTMENTS CJSC, email=shakaryan@inviabroker.am, cn= Anahit Shakaryan
Date: 2026.05.27 12:54:18 +04'00'
---------- (signature)

REGISTERED BY

The RA Central Bank

Decision N. ….. as of

Governor of the RA Central Bank
Martin Galstyan

CHARTER

“Invia Investments”

CLOSED JOINT-STOCK COMPANY

(new edition)

1. Կանոնադրությունում օգտագործվող հիմնական հասկացությունները

1.Ընկերություն – «Ինվիա Ինվեսթմենթս» փակ բաժնետիրական ընկերություն
2. Ժողով – Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողով
3. Տարեկան ժողով – Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով
4. Խորհուրդ – Ընկերության տնօրենների խորհուրդ
5. Գործադիր տնօրեն – Ընկերության միանձնյա գործադիր մարմին
6. Ներքին աուդիտ – ներքին աուդիտի անկախ ստորաբաժանում
7. Կանոնադրություն – Ընկերության կանոնադրություն
8. Օրենսգիրք – Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսգիրք
9. Օրենք – «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք
10. Կենտրոնական բանկ – Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ
11. Բաժնետիրական համաձայնագիր – 7 ապրիլի 2026թ.-ին Ընկերության բաժնետերերի միջև կնքված բաժնետիրական համաձայնագիրը, տվյալ պահին գործող խմբագրությամբ:

1. Main terms used in the Charter

1. Company– "Invia Investments" closed joint stock company

2. Meeting-general meeting of shareholders of the Company

3. Annual Meeting - annual General Meeting of shareholders of the Company

4. Executive -the Board of Directors of the Company

5. General Director-is the sole executive body of the Company

6. Internal Audit - independent internal audit unit

7. Charter-Charter of the Company

8. Code-The Civil Code of the Republic of Armenia

9. Law - The Law of the Republic of Armenia "On Joint-Stock Companies"

10. Central Bank - The Central Bank of the Republic of Armenia

11. Shareholders' Agreement – The Shareholders' Agreement entered into between the Shareholders of the Company on April 7, 2026, as may be amended from time to time.

2. Ընդհանուր դրույթներ

2.1. «Ինվիա Ինվեսթմենթս» փակ բաժնետիրական ընկերությունը համարվում է առևտրային կազմակերպություն հանդիսացող տնտեսական ընկերություն, որի կանոնադրական կապիտալը բաժանված է ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի, որոնք բաշխվում են միայն նրա հիմնադիրների կամ նախապես որոշված այլ անձանց միջև: Ընկերությունն իրավաբանական անձ է և ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված, ինքնուրույն հաշվեկշռում հաշվառված գույք:

2. General provisions

2.1. “Invia Investments” closed joint stock company is considered to be commercial business economic enterprise, authorized capital of which is segregated on some quantity of shares that affirm obligations of shareholders concerning the Company which are distributed only among its founders or other predetermined persons. The Company is a legal entity and is entitled to have its own property, separated from its Shareholders, which is accounted in self-dependent balance.

2.2. Ընկերության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (Կենտրոնական բանկի կողմից գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (գրանցումից հանելու մասին ներդրումային ընկերությունների գրանցումների մատյանում գրառման) պահից:

2.2. The Company shall exercise any and all the rights of a legal entity since the moment of its state registration and act in this capacity until the end of its dissolution (up to the moment of the due registration of its liquidation).

2.3. Ընկերությունը կարող է ունենալ կնիք, իր ֆիրմային անվանումը պարունակող ձևաթղթեր, խորհրդանիշ, օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային (սպասարկման) նշան ու անհատականացնող այլ միջոցներ:

2.3. The Company may have a seal, letterheads, stamp, trademark (servicing mark) registered in the order stated by the law, and other identifying marks.

2.4. Ընկերության գործունեությունը կարգավորվում է Օրենսգրքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, Օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև Կանոնադրությամբ:
Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են բաժնետիրական ընկերությունների գործունեությունը կարգավորող այլ նորմեր, քան բովանդակում է Կանոնադրությունը, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

2.4.The Company's activity is governed by the Code, RA Law «On Securities Market, the Law, other laws and legal acts of RA, as well as by the following Charter.
If the international agreements of RA provide other norms regulating activity of joint-stock companies that differ from the ones stipulated in this Charter, the norms of international agreements are applied.

2.5. Ընկերության բաժնետերերի և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են Օրենքով և Կանոնադրությամբ:

2.5.Relations between Company and Shareholders are regulated by Law and this Charter.

2.6. Ընկերության կողմից ծառայությունների մատուցմամբ պայմանավորված բոլոր գործառնություններն իրականացվում են բացառապես անկանխիկ ձևով:

2.6.All transactions caused by the provision of services by the company are carried out exclusively by non-cash method.

2.7. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Ընկերությունը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար: Բաժնետերերը Ընկերության պարտավորությունների համար պատասխանատվություն չեն կրում և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

2.7.The Company shall be liable for its obligations by its entire property.
The Company shall bear no responsibility for the obligations of its Shareholders.

The Shareholders shall not be liable for the obligations of the Company. Each Shareholder shall carry out a risk within the amount of the shares held by them.

2.8. Եթե Ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ է հանդիսանում բաժնետերերի կամ այլ անձանց գործունեությունը (անգործությունը), որոնք ունեն Ընկերությանը կատարման համար պարտադիր ցուցումներ տալու իրավունք կամ Ընկերության գործունեությունն այլ կերպ կանխորոշելու հնարավորություն, ապա Ընկերությանը պատկանող գույքը չբավարարելու դեպքում այդ բաժնետերերի կամ այլ անձանց վրա կարող է դրվել լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն՝ Ընկերության

2.8.If the Company is recognized insolvent (bankrupt) because of the actions (inactivity) of its shareholders or any other person empowered to make decisions or to give mandatory instructions for the Company or otherwise influence, or predetermine the business of the Company, such shareholders or persons shall bear subsidiary liability for the Company's obligations. Activities (inactivities) of the above mentioned Shareholders are considered to be reason for bankruptcy (insolvency) of the Company only if they have used the above-mentioned

պարտավորությունների համար: Վերոհիշյալ բաժնետերերի կամ այլ անձանց գործողությունները (անգործությունը) համարվում են Ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ միայն այն դեպքում, եթե նրանք օգտագործել են վերը նշված իրենց իրավունքը կամ հնարավորությունները, նախօրոք իմանալով, որ այդ պատճառով Ընկերությունը կհայտնվի անվճարունակության (սնանկության) վիճակում:

powers or rights and they knew in advance that this would cause Company's bankruptcy (insolvency).

2.9. Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

2.9.Republic of Armenia and communities shall bear no responsibility for the obligations of the Company. Likewise, the Company shall not be liable for the obligations of Republic of Armenia and communities.

2.10. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

Հայերեն լրիվ՝ «Ինվիա Ինվեսթմենթս» Փակ Բաժնետիրական Ընկերություն Կրճատ՝ «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ

Ռուսերեն լրիվ՝ Закрытое акционерное общество «Инвиа Инвестментс»

Կրճատ՝ ЗАО «Инвиа Инвестментс»

Անգլերեն լրիվ՝ "Invia Investments" Closed Joint Stock Company Կրճատ՝ "Invia Investments" CJSC»

2.10.The firm name of the Company is:

In Armenian full:
«Ինվիա Ինվեսթմենթս» Փակ Բաժնետիրական Ընկերություն
Briefly in Armenian: «Ինվիա Ինվեսթմենթս» ՓԲԸ
In Russian full:
Закрытое Акционерное Общество «Инвиа Инвестментс»
Briefly in Russian: ЗАО «Инвиа Инвестментс»
In English full: "Invia Investments" Closed Joint Stock Company
Briefly in English: "Invia Investments" CJSC

2.11.Ընկերության գտնվելու վայրը և փոստային հասցեն է՝ ՀՀ ք. Երևան, Փավստոս Բուզանդի փողոց, շենք 15, տարածք 24,25:

2.11.The registered office and postal address of the Company is: RA Yerevan Pavstos Buzand str., bld 15, area 24,25.

3. Ընկերության գործունեության առարկան ու նպատակը

3.Objectives and scope of the Company's activity

3.1.Ընկերության ստեղծման նպատակն է գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

3.1.The Company was established for gaining profit from business.

3.2.Ընկերության գործունեության հիմնական տեսակն է ներդրումային ծառայությունների իրականացումը:

3.2. Main activity of the Company is provision of investment services.

3.3.Ընկերությունը կարող է իրականացնել «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված ցանկացած գործունեություն:

3.3.The Company is entitled to maintain any activity, which is not prohibited by the Law of Republic of Armenia «On Securities Market».

3.4. Ընկերության իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով:

3.4.Company's rights can be restricted only in cases established by Law and in order defined by Law.

4. Ընկերության իրավական վիճակը, իրավունքներն ու պարտականությունները

4.1. Ընկերությունն առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է:
Ընկերությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, կարող է օրենսդրությամբ սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում, ինչպես Հայաստանի Հանրապետության արժույթով, այնպես էլ արտարժույթով:

4.Legal status, rights and liabilities of the company

4.1. The Company is a commercial enterprise legal entity. The Company is entitled to have its own separate property and shall bear responsibility for its obligations with all its property. The Company is entitled to conclude contracts, acquire or exercise property or personal non-property rights, bear liabilities, be a plaintiff and defendant in the court.

The Company has its own independent balance-sheet and can open accounts at the banks of RA or other countries, in local and foreign currencies in the order stated by Law.

4.2. Ընկերության բաժնետոմսերը բաշխվում են միայն նրա բաժնետերերի (այդ թվում՝ հիմնադիրների) կամ նախապես որոշված այլ անձանց միջև: Ընկերությունն իրավունք չունի անցկացնել իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն կամ անսահմանափակ թվով անձանց այլ կերպ առաջարկել ձեռք բերել դրանք:

4.2. The Company's shares are distributed only among its shareholders (including founders) or other pre-determined persons. The Company does not have the right to conduct an open subscription of its issued shares or otherwise offer an unlimited number of people to acquire them.

4.3.Ընկերությունը կարող է լինել այլ ընկերության (այդ թվում՝ դուստր ու կախյալ) հիմնադիր (մասնակից), բացառությամբ Օրենսգրքով, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Օրենքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերի:

4.3. Except for the cases provided under the Code, RA Law “On the securities market”, the Law and other laws, the Company may be a founder (shareholder) of another company (including subsidiary and daughter enterprises).

4.4. Ընկերությունն իրավունք ունի.

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը,

4.4.The Company shall have the right to:

- acquire, hold, use and manage any property, securities included and dispose of its profits or other useful results thereof in any manner not prohibited by the legislation of the Republic of Armenia;

- օտարել, վարձակալության տալ, փոխանակել, օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով

- alienate, let on lease, exchange or otherwise legally transfer its property rights, be a pawnbroker or a depositor;

փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու,

- ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տեղաբաշխել արժեթղթեր,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր և կրել պարտավորություններ,
- ինքնուրույն ընտրել իր արտաքին տնտեսական գործունեության վարման կարգը, այն իրականացնել անմիջականորեն, առանց միջնորդի կամ այլ կազմակերպության միջոցով՝ նրա հետ մտնելով պայմանագրային հարաբերությունների մեջ,
- ունենալ միջոցներ արտարժույթով: Օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ձեռք բերել (այդ թվում՝ ստանալ որպես արտաքին տնտեսական գործունեության արդյունք) արտարժույթով միջոցներ և ինքնուրույն տնօրինել դրանք, այդ թվում՝ վաճառել պետությանը, իրավաբանական անձանց և (կամ) քաղաքացիներին,
- օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում արտահանել և ներմուծել ապրանքներ, արտադրված, գնված և այլ օրինական ձևով ստացված արտադրանք, ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել օտարերկրյա իրավաբանական անձանց և (կամ) քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք և (կամ) անդամակցել իրավաբանական անձանց,
- ինքնուրույն պլանավորել իր գործունեությունը, որոշել կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների ծավալը, գները,

- independently form its financial assets, including by involving borrowed means, take banking and business loans from the Armenian and foreign banks in local and foreign currencies;
- emit and place shares in the manner envisaged by the legislation of the Republic of Armenia;
- sign contracts and bear liabilities according to the order envisaged by the legislation of the Republic of Armenia;
- independently decide its foreign economic policy and implement it directly without any intermediaries or through other entity connected with the Company by contractual relations;
- have resources in foreign currency. Acquire, by all means not prohibited by the legislation (including receive as a result of foreign economic policy), means by foreign currency and independently possess, as well as sell them to the state, legal entities and (or) citizens;
- in cases and in conformity with the procedure provided by law import and export goods, product produced, purchased and acquired legally, provide services, perform works for any foreign legal entities or organizations and citizens, make use of the results of such persons' works or services, make investments in other countries, or establish, or participate in the establishment of new legal entities under the law of any such country;
- independently plan its business, determine the amount and prices of the works orservices to be manufactured, performed or rendered,

- ձեռք բերել իր կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի մի մասը,
- օգտվել օրենսդրությամբ և Կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

- acquire part of the shares placed bythe Company;
- exercise other rights provided by the Law or the Charter.

4.5.Ընկերությունը պարտավոր է՝

4.5. The Company shall:

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություն,
- keep its accounting books, submit financial and statistical statements in conformity with the procedure provided by RA legislation,

- օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով, ի գիտություն բոլորի, հրապարակել իր տարեկան հաշվետվությունը, հաշվապահական հաշվեկշիռը, շահույթների և վնասների հաշվետվություն,
- within the terms established by law, for everyone's knowledge, publish its annual statements, balance-sheets, statements of profits and losses;

- աշխատանքային պայմանագրեր կնքել Ընկերության աշխատակիցների հետ,
- sign labor contracts with the employees of the Company;

- փոխհատուցել իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու արդյունքում երրորդ անձանց հասցված վնասը,
- to compensate for the damage caused to third parties as a result of non-fulfillment or improper fulfillment of their obligations,

- ապահովել Ընկերության փաստաթղթերի (Ընկերության պետական գրանցման վկայականի, կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Ընկերության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների, Ընկերության փոխկապակցված անձանց, նշանակալից ու խոշոր բաժնետերերի ցուցակների, կնքած պայմանագրերի, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը իր գտնվելու վայրում,
- ensure the compliance and safe custody of inner documentation (certificate of state registration of the Company, charter, instruments certifying the title to property, internal accounting of the Company and its subsidiaries (if any), annual statements, accounting documents or minutes of the Meetings held by any administrative body, lists of affiliated persons, significant and large shareholders of the Company, concluded contracts and other documents required by law or other legal acts) at the office place;

- հնարավորություն ստեղծել բաժնետերերի համար ծանոթանալու Ընկերության վերոնշյալ փաստաթղթերի հետ (բացառությամբ այն փաստաթղթերի, որոնք պարունակում են գաղտնի տեղեկություններ),
- to give the Shareholders the opportunity to get acquainted with the above-mentioned documents (except for the ones that include confidential information);

- կրել օրենսդրությամբ և Կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:
- bear other liabilities provided by law or the following Charter.

5. Ընկերության առանձնացված ստորաբաժանումներ, դուստր և կախյալ ընկերություններ

5.1.Ընկերությունն իրավունք ունի Կանոնադրության դրույթների, Օրենսգրքի, Օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ), ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների տարածքում: Ընկերության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են Ընկերության հաստատած կանոնադրությունների հիման վրա, իսկ նրանց ղեկավարները գործում են Ընկերության լիազորագրի հիման վրա:

Ընկերության մասնաճյուղ է համարվում նրա առանձնացված ստորաբաժանումը, որը տեղակայված է Ընկերության գտնվելու վայրից դուրս և իրավունք ունի իրականացնել Ընկերության բոլոր գործառույթները կամ դրանց մի մասը, ներառյալ ներկայացուցչական գործառույթները:

Ընկերության ներկայացուցչություն է համարվում նրա առանձնացված ստորաբաժանումը, որը տեղակայված է Ընկերության գտնվելու վայրից դուրս, ներկայացնում է Ընկերության շահերը և իրականացնում դրանց պաշտպանությունը:

5.2.Մեկ այլ ընկերություն համարվում է Ընկերության դուստր ընկերություն, եթե Ընկերությունը այդ ընկերության կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով կամ օրենքով չարգելված այլ ձևով (այդ թվում՝ հիմնական և դուստր ընկերությունների միջև կնքված պայմանագրին համապատասխան) հնարավորություն ունի կանխորոշելու ընկերության որոշումները:

Մեկ այլ ընկերություն համարվում է Ընկերության կախյալ ընկերություն, եթե Ընկերությունն ունի այդ ընկերության բաժնեմասերի (քվեարկող բաժնետոմսերի) ավելի քան քսան տոկոսը:

5. Separate subdivisions, daughter and subsidiary companies

5.1. The Company shall be entitled to establish under this Charter, Code, Law and other legal acts separate subdivisions (branches and representative offices) both witin Armenia and outside of its territory. The separate subsidiaries and institutions of the Company are not legal entities and shall act based on the charters approved by the Company. Their heads act upon the Power of Attorney issued by the Company.

Branch is considered to be the Company’s separate subdivision, which is located out of the office place of the Company and is empowered to implement Company’s all functions or a part of them, including representative functions.

Representative office of the Company is considered to be its separate subdivision, which is located out of the office place of the Company and represents Company’s interests and implements their protection.

5.2. Other company is considered to be Daughter Company if the Company has opportunity of influence that company's decisions due to predominant participation in that company's charter capital or in any other way allowed by the law (including contracts concluded between main and daughter companies).

Other company is considered to be subsidiary enterprise if the Company owns more than twenty percent of that company’s share fractions (voting shares).

Օտարերկրյա պետություններում դուստր կամ կախյալ ընկերությունների հիմնադրումը կամ մասնակցությունը կատարվում է դրանց գտնվելու վայրի երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

Establishment of or participation in the daughter or subsidiary companies in foreign countries shall be governed by the laws and other legal acts of those countries unless the international treaties signed by the Republic of Armenia provide for other rules.

Դուստր ընկերությունը պարտավորություն չի կրում Ընկերության պարտավորությունների համար: Ընկերությունը համապարտ պատասխանատվություն է կրում դուստր ընկերության այն գործարքների համար, որոնք կատարվում են ի իրականացումն Ընկերության կողմից տրված և դուստր ընկերության համար պարտադիր կատարման ենթակա ցուցումների: Ընկերության մեղքով դուստր ընկերության անվճարունակության դեպքում Ընկերությունը լրացուցիչ պատասխանատվություն է կրում դուստր ընկերության պարտավորությունների համար:

Daughter Company shall not account for the liabilities of the Company. The Company is jointly liable for daughter company's transactions that are implemented according to the compulsory instructions of the Company. In the event of insolvency of the Daughter company due to the fault of the Company, the Company bears subsidiary liability for the obligations of the Daughter company.

Դուստր ընկերության բաժնետերերն իրավունք ունեն Ընկերությունից պահանջել նրա մեղքով դուստր ընկերությանը պատճառած վնասների հատուցում: Վնասները Ընկերության մեղքով պատճառված են համարվում, եթե դրանք վրա են հասել դուստր ընկերության կողմից Ընկերության պարտադիր ցուցումներ կատարելու հետևանքով:

Shareholders of daughter company are empowered to require damage indemnity if those damages were due to Company’s fault. Damages are considered to be due to Company’s fault if they caused in result of implementing Company’s compulsory instructions by Daughter Company.

Ընկերությունը պարտավոր է օրենքով սահմանված կարգով տեղեկություններ հրապարակել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան քսան տոկոսը ձեռք բերելու մասին:

The Company shall permanently publish information of acquiring more than twenty percent of voting shares of Limited Liability Company or Joint Stock Company.

6. Ընկերության կանոնադրական կապիտալը

6.Charter capital of the company

6.1.Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկերության կանոնադրական կապիտալը չի կարող պակաս լինել Օրենքով սահմանված չափից: Ընկերության կանոնադրական կապիտալը կազմվում է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից:

6.1. Charter capital of the Company is the minimum amount of property securing the interests of the Company’s creditors. The charter capital of the Company cannot be less than the amount stated by the Law. The charter capital consists of the nominal value of the shares acquired by the Shareholders.

6.2.Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 702,000 000 (յոթ հարյուր երկու միլիոն) ՀՀ դրամ, որը կազմում է 7,020,000 (յոթ միլիոն քսան հազար) հատ հասարակ (սովորական) անվանական ոչ

6.2. The charter capital of the Company constitutes to AMD 702,000,000 (seven hundred two million), which is divided into 7,020,000 (seven million twenty thousand) ordinary (common) registered non-documentary shares,

փաստաթղթային բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 100 (մեկ հարյուր) դրամ: Բոլոր 7,020,000 բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից:

with a nominal value of AMD 100 (one hundred) per share. All 7,020,000 shares have been placed among the shareholders and have been fully paid by them.

6.3.Ընկերությունը կարող է կանոնադրական կապիտալի չափը փոխել Ժողովի որոշմամբ, որը երրորդ անձանց համար ուժի մեջ է մտնում Կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելուց և դրանք «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով գրանցելու պահից:

6.3. The Company may alter the amount of its charter capital based on the resolution of the Meeting, which shall enter in force upon the relevant amendment in Charter and its registration in a registry book of investment companies in order stated by the law of Republic of Armenia "On Securities Market "and other legal acts.

6.3.1. Կանոնադրական կապիտալի ավելացում:

Ընկերության կանոնադրական կապիտալի չափը կարող է ավելացվել Ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ, եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ վճարված են: Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումն իրականացվում է բացառապես Բաժնետերերի ընդհանուր ժողովի **միաձայն** որոշմամբ: Կապիտալի ավելացումն իրականացվում է ի շահ Բաժնետերերի՝ նրանց պատկանող բաժնետոմսերի քանակին **համամասնորեն**, այնպես, որ ապահովվի Բաժնետերերի մասնակցության/բաժնեմասերի (տոկոսների) անփոփոխությունը: Բաժնետերերի մասնակցության համամասնության որևէ փոփոխություն կանոնադրական կապիտալի ավելացման արդյունքում չի թույլատրվում, բացառությամբ սույն Կանոնադրությամբ կամ Օրենքով սահմանված դեպքերի:

Բաժնետոմսեր ձեռք բերելու իրավունք տվող ընկերության արժեթղթերի սեփականատերերը բաժնետերերից առաջ ունեն իրենց բաժնին համապատասխան նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք: Ընկերության նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չիրականացնելու դեպքում Ընկերության բաժնետերերն ունեն Ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնին համապատասխան նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք: Բաժնետոմսեր ձեռք բերելու իրավունք տվող ընկերության արժեթղթերի սեփականատերերի նախապատվության իրավունքի (նոր բաժնետոմսերի ձեռքբերման) իրականացման ժամկետը սահմանվում է 15 օր: Ընկերության բաժնետերերի կողմից նոր

6.3.1. Increase of the charter capital

Increase of the charter capital may be made only upon the full payment of all shares in the charter capital either at the account of the Company's property through increasing the nominal value of the shares earlier placed or through distribution of additional of shares.

Increase of the Charter Capital of the Company shall be subject to the **unanimous** resolution of the General Meeting of Shareholders. Such increase shall be exercised for the benefit of the Shareholders **in proportion** to their shareholdings, ensuring that their respective participation percentages remain unchanged. No alteration of the Shareholders' participation proportions in the Charter Capital shall be permitted during such increase.

Shareholders of the Company shall have preemption in acquiring the shares newly issued by the Company within the fixed term in proportion to their share in the charter capital. At that holders of convertible securities issued by the Company shall have priority in exchanging, within the fixed term, their securities before placement of the shares with the Shareholders. Term for implementing preemption rights for holders of convertible securities is 15 days. Term for implementing preemption rights for Shareholder is 30 days.

Action about increasing the size of the charter capital at the account of distributing additional shares shall be made only after the full payment of the shares placed earlier.

բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը սահմանվում է 30 օր:

Ընկերությունը կարող է որոշում ընդունել լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին միայն նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի լրիվ վճարված լինելու դեպքում:

Եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքի գումարը լրիվ վճարված չէ, ապա Ընկերությունն իր կանոնադրական կապիտալը չի կարող մեծացնել ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին:

If the cost of the shares placed by the Company is not fully paid the Company cannot increase its charter capital through attracting additional funds.

Ընկերությունն իր ամենամյա գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնել կանոնադրական կապիտալը՝

- շահույթի մի մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ,
- կանոնադրական կապիտալի, պահուստային կապիտալի և արտոնյալ բաժնետոմսերի լուծարային և անվանական արժեքների տարբերության ընդհանուր գումարը գերազանցող գույքը (զուտ ակտիվները) կամ դրա մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ:

Upon summing up the results of its annual activity the Company may increase charter capital through increase of face value of nominal shares:

- by installing part of its net profit into the charter capital;
- by transfering the (part of) property exceeding the amount of the charter capital, reserve capital and difference between liquidation and face values of preferred shares (net assets) to the charter capital.

6.3.2. Կանոնադրական կապիտալի նվազեցում:

Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը կարող է կատարվել բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ և բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատմամբ, այդ թվում՝ Օրենքով նախատեսված դեպքերում դրանց մի մասի ձեռքբերմամբ և մարմամբ:
Ընկերությունն իրավունք չունի նվազեցնել կանոնադրական կապիտալը, եթե դրա հետևանքով նրա չափը կդառնա ավելի փոքր Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված նվազագույն չափից: Ընկերության կողմից կանոնադրական կապիտալը Օրենքով սահմանված նվազագույն չափից նվազեցնելը հիմք է Ընկերության լուծարման:
Ընկերության կանոնադրական կապիտալը թույլատրվում է նվազեցնել Օրենքով սահմանված

6.3.2. Decrease of the charter capital

Decrease of the charter capital may be done through decreasing the nominal value of the shares and (or) decreasing the number of shares by redemption and pay off the outstanding shares in the cases envisaged by the Law.

The Company cannot decrease its charter capital if as a result of such decrease the it will be less than the minimum amount provided by the Law. Decreasing the amount of the charter capital by the Company less than the amount stated in the Law is a basis for liquidation of the Company.

The action of decreasing the charter capital is permitted only after the notifying the creditors of the Company in the manner envisaged by the Law. In such case the creditors shall be entitled to call, within the terms

կարգով՝ նրա բոլոր պարտատերերին տեղեկացնելուց հետո: Այդ դեպքում Ընկերության պարտատերերն իրավունք ունեն Ընկերությունից պահանջել պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ, պարտավորությունների դադարեցում կամ վաղաժամկետ կատարում, ինչպես նաև վնասների հատուցում:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման և Կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին որոշումն ընդունվում է Ժողովի կողմից՝ դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման կապակցությամբ բաժնետերերին վճարումները կատարվում են Ընկերության կանոնադրության փոփոխության պետական գրանցումից հետո:

provided by the Law, for additional security, termination or early fulfillment of obligations or compensation for damages.

The action of decreasing the charter capital and accordingly amending the Charter shall be made at the General Meeting of the Shareholders by 3/4 of votes of Shareholders who take part in the Meeting but not less than 2/3 of shares representing the total voting power of the Company.

Payments connected with the decrease of the charter capital shall be made by Shareholders upon the state registration of the according change in the Charter of the Company.

7. Բաժնետոմսեր և այլ արժեթղթեր

7.1.Ընկերությունը կարող է տեղաբաշխել բաժնետոմսեր, պարտատոմսեր, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ արժեթղթեր:

7.2.Ընկերությունն իրավունք ունի թողարկել և տեղաբաշխել ոչ փաստաթղթային ձևի մեկ կամ մի քանի դասի հասարակ (սովորական) և արտոնյալ բաժնետոմսեր: Ընկերության կողմից թողարկված/տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը չպետք է գերազանցի Ընկերության կանոնադրական կապիտալի ընդհանուր ծավալի 25 տոկոսը:

Ընկերության կողմից թողարկված հասարակ (սովորական) նույն դասի բաժնետոմսերի անվանական արժեքը պետք է լինի միևնույնը:

Ընկերության որոշակի դասի (միանման տարբերակիչ բնորոշ առանձնահատկություններ՝ անվանական արժեք, հավաստող իրավունքներ, արտոնություններ և սահմանափակումներ ունեցող) ամեն մի արտոնյալ բաժնետոմս ունի միևնույն անվանական արժեքը:

Ընկերությունը ընդհանուր ժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում կարող է թողարկել հաստատագրված և (կամ) փոփոխական շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսեր:

Եթե արտոնյալ բաժնետոմսերի որոշակի դասերի համար Օրենքով այլ բան նախատեսված չէ, արտոնյալ

7. Shares and other securities

7.1. The Company may place shares, bonds and other securities provided by RA Law “On Securities Market”, the Law and other legal acts of RA.

7.2. The Company is entitled to place common (ordinary) shares and preference shares of one or several classes. However, the nominal value of the preference shares placed by the Company shall not exceed 25% of the total amount of the charter capital.

The nominal value of the common shares of the same class shall be equal.

Preference shares of each separate class or type issued by the Company (with distinctive similar characteristic features – as to their nominal value, special rights, privileges and restrictions) shall have the same nominal value.

The Company may within the terms and in the manner envisaged by the resolution of the General Meeting issue shares bearing fixed and (or) variable dividends (irrespective of the results of its economic activity) as well as preference shares for the employees.

բաժնետոմսերի սեփականատերերը Ժողովում ձայնի իրավունք չունեն:
Արտոնյալ բաժնետոմսերը կարող են փոխարկվել հասարակ (սովորական) բաժնետոմսերի: Ընդ որում փոխարկելու ժամանակ Ընկերությունը պետք է մարի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ բոլոր պարտքերը կամ նրանց համաձայնությամբ պարտավորվի վճարել պարտքերն այլ ձևով:
Ընկերության բոլոր բաժնետոմսերն անվանական են:

Unless otherwise provided by law for certain classes of preferred shares, holders of preferred shares do not have the right to vote at the meeting.

Preference shares may be converted to common (ordinary) shares. While converting such shares the Company shall pay all its debts to the holders of preference shares or acquire their consent for payment of debts in any other way.

All the shares of the Company are nominal.

7.3.Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել անվանական բաժնետոմսեր և պարտատոմսեր:

7.3. The Company may by the resolution of the General Meeting issue nominal shares and bonds.

7.4.Բաժնետիրոջ կողմից բաժնետոմսերի արժեքը վճարելուց հետո ընկերությունը պետք է ապահովի բաժնետերերի բաժնետոմսերի գրանցումը իր բաժնետերերի ռեեստրի (գրանցամատյանի) բաժնետերերի անձնական հաշիվներում՝ բաժնետերերի ռեեստրի վարման Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կանոններին համապատասխան:

7.4. After the shareholder pays the value of the share, the Company must ensure that the shareholders' shares are registered on the personal accounts of the shareholders of its register in accordance with the rules established by law and other legal acts.

7.5.Բաժնետոմսն անբաժանելի է (ամբողջական բաժնետոմս), բացառությամբ կոտորակային բաժնետոմսեր առաջանալու՝ օրենքով նախատեսված դեպքերի: Եթե երկու կամ ավելի անձինք սեփականատեր են մեկ բաժնետոմսի, ապա նրանք համարվում են մեկ բաժնետեր:

7.5. The share is indivisible except for cases stipulated by law when fractional shares arise. If one and the same share is jointly held by two or more shareholders such joint holders shall be considered as one.

7.6.Ընդհանուր ժողովի հաստատած՝ աշխատակիցների բաժնետիրացման ծրագրով սահմանված կարգով Ընկերությունը կարող է իր աշխատակիցների միջև տեղաբաշխել (տրամադրել) Ընկերության բաժնետոմսեր կամ այնպիսի ածանցյալ ֆինանսական գործիքներ (գործարքներ), որոնցով պարտավորությունների վերջնահաշվարկը կարող է իրականացվել Ընկերության բաժնետոմսերով (այսուհետ՝ ածանցյալ ֆինանսական գործիքներ):

7.6. In accordance with the procedure established by the Employee stock or option plan (ESOP) approved by the General Meeting, the Company may place (provide) shares of the Company or such derivative financial instruments (transactions) among its employees, for which the final settlement of obligations can be carried out by shares of the company (hereinafter - derivative financial instruments).

7.7.Ընկերության լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերը պետք է վճարվեն դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան դրանց տեղաբաշխման պահից մեկ տարվա ընթացքում: Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարման միջոց կարող են լինել գույքը, ներառյալ՝ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները, մտավոր սեփականությունը, ինչպես նաև դրամական գնահատում ունեցող այլ իրավունքները:

7.7. Installments for additional shares placed by the Company shall be paid within the term fixed by the resolution on the placement but not later than within a year of such placement.

Payment against the shares and other securities of the Company may be made in any form of property including monetary means, securities, property rights, intellectual property, as well as any other right, which may be expressed in money terms.

Ընկերության բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, որոնց դիմաց վճարումը նախատեսված է ոչ դրամական միջոցներով, դրանց ձեռքբերման ժամանակ վճարում են լրիվ արժեքով, եթե արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշմամբ այլ բան նախատեսված չէ:
Ընկերության հիմնադրման ժամանակ բաժնետոմսերի դիմաց հիմնադիրների կողմից վճարվող գույքի դրամական գնահատականը սահմանվում է հիմնադիրների համաձայնությամբ, իսկ բաժնետոմսերի և այլ արժեթղթերի լրացուցիչ տեղաբաշխման դեպքում՝ Խորհրդի որոշմամբ՝ Օրենքով սահմանված կարգով և ենթակա է գնահատման անկախ գնահատողի կողմից, բացառությամբ լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերման ժամանակ դրանց դիմաց վճարվող գույքի դրամական գնահատականը ժողովի միաձայն որոշմամբ սահմանված լինելու դեպքերի:

If the payment against the shares or securities shall be made in non-monetary form, such shares shall be paid up fully at their acquisition unless otherwise stipulated by the resolution on share distribution.

The monetary valuation of the property paid by the founders for shares at the establishment of the Company is established with the consent of the founders, and in the case of additional placement of shares and other securities -by a decision of the Council in accordance with the procedure established by law and is subject to evaluation by an independent appraiser, except for cases when the monetary value of the property to be paid for the acquisition of additional shares and other securities is determined by a unanimous decision of the meeting.

7.8.Եթե լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի ձեռքբերման ժամանակ տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետներում բաժնետոմսերի լրիվ արժեքի վճարումը չի կատարվել, իսկ վճարված գումարը մեկ համապատասխան բաժնետոմսի արժեքից պակաս է, ապա բաժնետոմսերը փոխանցվում են Ընկերության տրամադրության տակ և դրանց արժեքը ժամանակին չվճարած բաժնետերերը զրկվում են բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքից: Այդ մասին կատարվում է համապատասխան նշում Ընկերության բաժնետերերի ռեեստրում: Դրամական միջոցները և այլ գույքը, որոնք վճարվել են բաժնետոմսերի դիմաց, բաժնետիրոջը չեն վերադարձվում:

7.8. If during the acquisition of additional shares, the payment of the full value of the shares has not been made within the terms set by the resolution on distribution, and the amount paid is less than the value of one relevant share, then the shares are transferred to the Company's disposal and the shareholders who have not paid their value on time are deprived of the ownership rights to the shares. A corresponding note is made about it in the register of shareholders of the Company. Cash and other property paid for shares are not returned to the shareholder.

Եթե լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի ձեռքբերման ժամանակ տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետներում բաժնետոմսերի լրիվ արժեքի վճարումը չի կատարվել, իսկ վճարված գումարը մեկ համապատասխան բաժնետոմսի արժեքից պակաս չէ, ապա կատարվում է բաժնետոմսերի քանակի վերահաշվարկ, այնպես, որ բաժնետոմսերի քանակի և ձեռքբերման արժեքի արտադրյալը չգերազանցի դրանց համար արդեն վճարված գումարը: Մնացած բաժնետոմսերը փոխանցվում են Ընկերության տրամադրության տակ, և բաժնետերերը զրկվում են դրանց նկատմամբ սեփականության իրավունքից: Այդ մասին կատարվում է համապատասխան նշում Ընկերության բաժնետերերի ռեեստրում:

If during the acquisition of additional shares, the payment of the full value of the shares has not been made within the terms set by the resolution on distribution, and the amount paid is not less than the value of one relevant share, then the number of shares is recalculated so that the product of the number of shares and the purchase price does not exceed the amount already paid for them. The remaining shares are transferred at the disposal of the Company, and the shareholders are deprived of their ownership rights. A corresponding note is made about it in the register of shareholders of the Company.

Ընկերության տրամադրության տակ փոխանցված բաժնետոմսերը չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվարկման ժամանակ, դրանցով շահութաբաժիններ չեն հաշվարկվում: Ժողովը հաստատում է բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և համապատասխան փոփոխություններ է կատարում կանոնադրությունում:

The shares placed at the disposal of the company do not give the right to vote, are not taken into account when counting votes, and dividends are not accrued on them.

The Meeting approves the results of the placement of shares and makes appropriate amendments to the Charter.

8. Ընկերության հիմնադրամներ և զուտ ակտիվներ

8. Company funds and net assets

8.1.Ընկերությունն ունի պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով:
Եթե պահուստային հիմնադրամը կազմում է Ընկերության կանոնադրությամբ սահմանվածից ավելի փոքր մեծություն, հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթի 5 տոկոսից ոչ պակաս չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:
Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և Ընկերության բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:
Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

8.1. The Company shall have a Reserve Fund in amount of 15% of the charter capital.

If the Reserve constitutes less than the size provided by the following Charter, the allocations to the Reserve Fund shall amount to at least 5% of the profit of the Company, also the amount of funds received from the difference of issuance and nominal prices of new shares.

The Reserve shall be used for covering the losses, bond pay-off and redemption of shares if the Company's profit does not suffice.

The Reserve cannot be used for other purposes

8.2.Ժողովի որոշմամբ Ընկերությունը կարող է ստեղծել նաև շահութաբաժինների վճարման, աշխատակիցների բաժնետիրացման, սպառման, կուտակման, սոցիալական զարգացման և այլ հիմնադրամներ:

8.2. The Company may by resolution of the General Meeting of the Shareholders establish funds for paying dividends, issuance of the shares for employees, consumption, accumulation, social development and other funds.

8.3.Ընկերության զուտ ակտիվների արժեքը գնահատվում է հաշվապահական հաշվեկշռի կամ աուդիտորական տվյալներով՝ օրենքով և Հայաստանի Հանրապետության այլ իրավական ակտերով սահմանված կարգով:
Ընկերության կողմից կանոնադրական կապիտալն օրենքով սահմանված նվազագույն չափից նվազեցնելը հանգեցնում է Ընկերության լուծարման:
Եթե Կանոնադրությամբ նախատեսված դեպքերում Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցման կամ Ընկերության լուծարման մասին որոշում չի ընդունվել, ապա Ընկերության բաժնետերերը, պարտատերերը, ինչպես նաև պետության կողմից

8.3. The cost of net assets of the Company shall be evaluated based on the balance sheet or audit data in the manner envisaged by the law and legal acts of RA.

Decrease of the charter capital below the minimum amount provided by the Law shall lead to the dissolution of the Company.

If the Company hasn't resolved about decreasing the amount of its charter capital or dissolution, the Shareholders, creditors or the authorized government agencies may demand to dissolve the Company by the court action.

լիազորագրված մարմիններն իրավունք ունեն պահանջել Ընկերության լուծարում՝ դատական կարգով:

9. Բաժնետերերի իրավունքները և պարտականությունները

9.1.Ընկերության որոշակի դասի յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները:

9.2.Հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերն Օրենքի և Կանոնադրության համաձայն իրավունք ունի.

- մասնակցել Ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
- ֆինանսական տարվա ավարտից հետո 60 օրվա ընթացքում ներկայացնել երկուսից ոչ ավելի առաջարկություններ Տարեկան Ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Խորհրդի և Ներքին աուդիտի անդամության թեկնածուներ, եթե նա հանդիսանում է ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր: Առաջարկվող թեկնածուների քանակը չի կարող գերազանցել այդ մարմիններում անդամների սահմանված քանակը:
- մասնակցել Ընկերության կառավարմանը,
- ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
- առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը,
- ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ Կանոնադրությամբ սահմանված կարգով ծանոթանալ հաշվապահական հաշվեկշռին, հաշվետվություններին, հաշվապահական գրքերին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը,
- Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 5% կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերին տիրապետող բաժնետերերը կարող են պահանջել աուդիտի անցկացում՝ Ընկերության

9.Rights and liabilities of the shareholders

9.1.Each common (ordinary) share of a certain class of the Company entitles its owner to similar rights.

9.2.In conformity with the Law and this Charter each holder of a common share has a right to:

- take part in the General Meeting of the Shareholders with the right of vote on any issue of its discretion;
- suggest no more than 2 issues for agenda of the General Meeting during 60 days after the end of fiscal year also suggest contenders for internal audit, if he owns no less than 2 percent of shares that have voting rights. The number of proposed candidates may not exceed the established number of members in these bodies.
- participate in the management of the Company;
- receive dividends from the profit earned by the Company;
- have preemption in acquiring the shares placed by the Company in cases provided by the Law and this Charter;
- receive any information about the company's activities, in accordance with the procedure established by the charter, including get acquainted with the balance sheet, reports, accounting books, production and economic activities of the Company, except for confidential information.
- any Shareholder(s) of the Company holding in aggregate at least 5% of the Company’s shares shall be reserved the right to demand an audit for examining the accountancy of the Company. Such

գործունեությանը վերաբերող հաշվետվությունները ստուգելու նպատակով: Ստուգման հետ կապված ծախսերը փոխհատուցում են ստուգումը պահանջող բաժնետերերը,

- Ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
- Ժողովում հանդես գալ առաջարկություններով,
- Ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,
- հայց ներկայացնել դատարան՝ Ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
- Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած Ընկերության գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը,
- օտարել կամ այլ ձևով այլ անձանց օտարել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսը հաշվի առնելով Բաժնետիրական համաձայնագրով առկա սահմանափակումները,
- օգտվել Կանոնադրությամբ և օրենքով նախատեսված այլ իրավունքներից:

Shareholders shall bear the costs connected with the examination;

- appoint a proxy for representing him at the General Meeting;
- carry motions to the consideration of the General Meeting,
- vote at the General Meeting by the total number of fully paid shares entitled to vote;
- suit in the court against the decisions of the General Meeting, if they contradict the Law and other legal acts;
- receive his share of property or its value upon the settlements with the Company's creditors and dissolution of the Company;
- freely sell or otherwise alienate his shares to third person taking into account the restrictions set out in the Shareholders' Agreement,;
- exercise other rights provided herein or by the Law.

9.3.Ընկերությունը պարտավոր է իր բաժնետերերին հնարավորություն ընձեռել Օրենքով սահմանված փաստաթղթերին ծանոթանալու համար: Բաժնետիրոջ պահանջով Ընկերությունը հնգօրյա ժամկետում պարտավոր է նրան տրամադրել Օրենքով սահմանված փաստաթղթերի պատճենները, բացառությամբ գաղտնի տեղեկությունների և Գործադիր տնօրենի հրամանների ու հրահանգների: Պատճեններ տրամադրելու համար վճարի չափը չի կարող գերազանցել դրանց պատրաստման և փոստային առաքման ծախսերը:

9.3.The Company shall give an opportunity to its Shareholders to get acquainted with the documents stipulated by the Law. By the request of the Shareholder the Company shall provide the Shareholder with the copies of stipulated documents in five days, except for confidential information and orders and commands of Executive Director. Charge for provision of copies cannot exceed the expenses of their preparation and postal delivery.

9.4.Հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերին չի կարող տրամադրվել նրանց պատկանող հասարակ (սովորական) բաժնետոմսերի անվանական արժեքից և քանակից չբխող լրացուցիչ ձայնի իրավունք:

9.4. No Shareholder of the Company may have any additional votes, which do not arise from the nominal value and the number of common (ordinary) shares held by him.

9.5.Հասարակ (սովորական) բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումները Ընկերության կողմից չեն երաշխավորվում:
Հասարակ (սովորական) բաժնետոմսերի տեսակարար կշիռը Ընկերության կանոնադրական կապիտալում չպետք է պակաս լինի 75 տոկոսից:

9.5.The Company does not guarantee the payment of dividends against the common shares.

The percentage of the common shares within the charter capital of the Company shall be not less than 75%.

9.6.Բաժնետերերը պարտավոր են չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնի տեղեկություններ:

9.6.Shareholders shall not compromise the confidential information relating the business of the Company.

9.7.Ընկերության կանոնադրական կապիտալում 10 և ավելի տոկոս ձեռք բերելու կամ մասնակցությունն ավելացնելու մտադրություն ունենալու դեպքում անձը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել նշանակալից մասնակցության ձեռքբերման նախնական համաձայնություն ստանալու դիմում: Օֆշորային տարածքներում մշտական բնակության վայր ունեցող կամ գործունեություն ծավալող ֆիզիկական անձինք, ինչպես նաև այդ տարածքներում ստեղծված կամ գրանցված իրավաբանական, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անձինք կամ վերջիններիս հետ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցություն (անկախ մասնակցության չափից) կարող են ձեռք բերել բացառապես «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

9.7. In case of intention of acquisition or raise of participation in Company's charter capital of 10 or more percent a person shall present to the Central Bank an application to receive preliminary consent.

Physical persons that have permanent residence activity in off-shore territories, legal entities established and registered in that territories, entities that don't have status of legal entities or entities that are affiliated with the latter in result of one or several transactions (no matter the amount), can acquire participation in charter capital only in the order stated by the RA Law "On Securities Market" – via getting the preliminary consent of Central Bank.

9.8. Այն բաժնետերը, որը մտադիր է օտարել իրեն պատկանող բաժնետոմսերը (կամ դրանց մի մասը) երրորդ անձի, պարտավոր է այդ մասին ծանուցել Ընկերության մյուս բաժնետերերին՝ ներկայացնելով բաժնետոմսերի գնման վերաբերյալ երրորդ անձի կողմից տրված **իրական և անհետկանչելի գրավոր առաջարկի** (օֆերտայի) պայմանները: Մյուս բաժնետերերն ունեն այդ բաժնետոմսերը ձեռք բերելու **նախապատվության իրավունք**՝ նույն պայմաններով և գնով, որոնք նախատեսված են երրորդ անձի առաջարկում:

9.8. A shareholder intending to transfer its shares (or any part thereof) to a third party shall notify the other shareholders by presenting the terms of a **real and irrevocable written offer** received from such third party. The other shareholders shall have the **pre-emptive right** to acquire the offered shares at the same price and on the same material terms as contained in the third party's offer.

Բաժնետոմսերի օտարման վերաբերյալ ծանուցումը («Օտարման ծանուցում») պետք է ներառի՝ (i) օտարվող բաժնետոմսերի քանակը, (ii) երրորդ անձի (գնորդի) ինքնությունը, (iii) օտարման գինը և մյուս էական պայմանները, (iv) նախապատվության իրավունքի իրականացման (ակցեպտի) ժամկետը, որը չի կարող պակաս լինել Օտարման ծանուցման պահից 60օրվանից, և (v) գործարքի կնքման վերջնաժամկետը, որը չի կարող գերազանցել 120 (հարյուր քսան) օրը:

The notice of transfer ("Transfer Notice") shall set forth: (i) the number of shares offered; (ii) the identity of the third-party purchaser; (iii) the price and other material terms and conditions; (iv) the period for exercising the pre-emptive right (acceptance period), which shall be no less than 60 days from the date of the Transfer Notice; and (v) the closing date of the transaction, which shall be no more than 120 (one hundred and twenty) days from the Transfer Notice.

Եթե որևէ բաժնետեր հրաժարվում է իր նախապատվության իրավունքից, ապա այդ բաժնետոմսերը ձեռք բերելու իրավունքն անցնում է

If any shareholder declines to exercise their pre-emptive right, the remaining shareholders shall be entitled to acquire such shares **pro rata** to their participation in the

մյուս բաժնետերերին՝ կանոնադրական կապիտալում իրենց մասնակցությանը **համամասնորեն**: Սույն կանոնը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ նախապատվության իրավունքը չի իրականացվել օտարվող բոլոր բաժնետոմսերի նկատմամբ կամ մինչև նախապատվության իրավունքի իրականացման ժամկետի լրանալը:

Charter Capital. This rule applies until the pre-emptive right is exercised regarding all offered shares or until the expiration of the exercise period.

Եթե բաժնետերերը սահմանված ժամկետում չեն օգտվում իրենց նախապատվության իրավունքից, կամ եթե ներկայացված հայտերը բավարար չեն բոլոր բաժնետոմսերի ձեռքբերման համար ինչպես նաև եթե նախապատվության իրավունքից չի օգտվում Ընկերությունը, ապա բաժնետերն իրավունք ունի բաժնետոմսերը (կամ դրանց չիրացված մասը) օտարել երրորդ անձին՝ Օտարման ծանուցման մեջ նշված նույն պայմաններով և գնով:

If the shareholders do not exercise their pre-emptive right within the prescribed period, or if the applications submitted are insufficient to purchase all shares, as well as if the company does not exercise its pre-emptive right, the shareholder has the right to alienate the shares (or their unrealized portion) to a third party on the same terms and at the same price as indicated in the notice of alienation.

10. Ընկերության շահութաբաժինների վճարման կարգը

10.1. Ընկերությունն իրավունք ունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին: Հայտարարված շահութաբաժինները վճարվում են ինչպես դրամով, այնպես էլ այլ գույքով:

10.2. Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) և տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ժողովը՝ Խորհրդի առաջարկությամբ: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող ավելի լինել Խորհրդի առաջարկածից և պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից: Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը:

10.3. Եթե Ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափն ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, այդ տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:
Եթե Ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի սահմանվում է արդեն վճարված միջանկյալ

10. Company's dividend payment policy

10.1. The Company is entitled to make a decision (announce) on paying quarterly, semi-annual or annual dividends against the shares placed with its Shareholders. Dividends can be paid as in cash, also other property. Dividends shall be paid from the net profit.

10.2. The action about paying the interim (quarterly and semi-annual) and annual dividends against the shares of each class and series shall be made by the General Meeting of the Shareholders based on the proposal of the Board of Directors. The amount of annual dividends can not be less than suggested by the Board of Directors and can not be less than the amount of interim dividends already paid up. The amount of intermediate dividends shall not exceed 50 percent of dividends placed basedon results of previous fiscal year.

10.3. If by decision of the General Meeting of the Shareholders the amount of the annual dividends is equal to the amount of the interim dividends already paid up against certain class and series of shares, annual dividends against the shares of the according class shall notbe paid.

If by decision of the General Meeting of the Shareholders the amount of the annual dividends

շահութաբաժինների չափից ավելի, ապա այդ տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:
Ժողովն իրավունք ունի որոշում ընդունել առանձին տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու կամ ոչ լրիվ չափով վճարելու մասին: Այդ որոշումների գործունեության ժամկետը սահմանվում է Ժողովի կողմից:

10.4. Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Ժողովի՝ տարեկան շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց:

10.5. Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար Խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցանկ, որում պետք է ընդգրկվեն՝

- միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում Խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ,
- տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Ընկերության բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում Տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

10.6. Ընկերությունն իրավունք չունի հայտարարել (որոշում ընդունել) տեղաբաշխված բաժնետոմսերի շահութաբաժինների վճարման մասին, եթե՝

- լրիվ չի վճարվել Ընկերության կանոնադրական կապիտալը,
- Ընկերությունը հետ չի գնել բոլոր բաժնետոմսերը՝ Օրենքին համապատասխան,
- շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Ընկերության տնտեսական վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկացման) հայտանիշներին, կամ եթե նշված հատկանիշները ի

exceeds the amount of the interim dividends already paid up against certain class and series of shares, annual dividends against such shares shall constitute the difference between the sum of annual and the sum of interim dividends already paid in the given year.

General Meeting of the Shareholders of the Company may make an action about non- payment or not full repayment of dividends against the shares of a certain class or series. The term of validity of such decision shall be fixed by the General Meeting of the Shareholders.

10.4 The date of the annual dividends payment shall be fixed by the General Meeting of the Shareholders along with the action about paying the dividends. The date of paying interim dividends shall be fixed by the action of the Board of Directors about paying the interim dividends, but not earlier than in 30 days after making such decision.

10.5. Each time for payment of dividends the Board of Directors shall compile the list of the Shareholders entitled to dividends, which shall contain:

- in the case of interim dividends: names of the Shareholders registered in the Shareholders Log of the Company at least 10 days prior the date of making such action by the Board of Directors;
- in the case of annual dividends: names of the Shareholders registered in the Shareholders Log as at the date of compiling the list of the Shareholders entitled to participate in the annual General Meeting of the Shareholders of the Company.

10.6. The Company shall not declare about the payment of dividends if:

- the charter capital of the Company is not fully paid;
- it has not redeemed its outstanding shares under the provision of the Law;
- as at the moment of making an action about paying the dividends the economic standing of the Company shows the signs of insolvency (bankruptcy) defined by the Law, or such signs will occur as a consequence of payment.

հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով,

- Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է Ընկերության կանոնադրական կապիտալից, կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով:

- the cost of the net assets is less than the charter capital of the Company or will be less after such payment.

11. Ընկերության կառավարման մարմինները

11.Management bodies of the company

11.1.Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը կառավարման բարձրագույն մարմինն է: Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 6 (վեց) ամսվա ընթացքում: Բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Ընկերության արտահերթ ժողովներ գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

11.1. The General Meeting of the Company's shareholders is the highest governing body of the Company. The Company is obliged to convene an annual General Meeting of shareholders each year within 6 (six) months following the end of the financial year. General Meetings of shareholders held in addition to the annual meeting are considered extraordinary. Extraordinary General Meetings of the Company are convened to discuss urgent matters.

11.2.Ընկերության բաժնետերերի ինչպես տարեկան, այնպես էլ արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Խորհրդի կողմից սեփական նախաձեռնությամբ գրավոր որոշմամբ: Արտահերթ ընդհանուր ժողովը կարող է գումարվել նաև գործադիր տնօրենի, Ներքին աուդիտի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով: Եթե Օրենքով սահմանված ժամկետում Խորհուրդը արտահերթ ժողովի գումարման մասին որոշում չի ընդունում կամ որոշում է ընդունում դրա գումարումը մերժելու մասին, ապա արտահերթ ժողովը կարող են գումարել ժողովի գումարման մասին պահանջը ներկայացրած անձինք:

11.2. Extraordinary Meetings may be convened by the initiative of the Board of Directors on basis of written resolution. Extraordinary Meetings also can be convened by request of Executive Director, internal audit committee (auditor), internal audit body or on the request of a Shareholder(s) of at least 10% of shares entitled to vote. If in terms stated in the Law the Board of Directors does not make a resolution on convening a Meeting or makes a resolution to refuse it, Extraordinary Meeting can be convened with persons who required this Extraordinary Meeting.

11.3.Ժողովի գումարման մասին որոշմամբ պետք է սահմանվի.

11.3.A resolution of convening Extraordinary Meeting shall state:

ա) Ընկերության ֆիրմային անվանումը և գտնվելու վայրը

a) Company name and location of the company,

բ) ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.

b) date, place and time of General Meeting of Shareholders,

գ) ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.

c) date of making up list of Shareholders who have right to participate the General Meeting of Shareholders,

դ) ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը.

ե) բաժնետերերի ծանոթանալու կարգը ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին, որոնք պետք է ներկայացվեն բաժնետերերին ժողովը նախապատրաստելու ընթացքում:

11.4.Ժողովի ծանուցման ձև է սահմանվում ծանուցումը բաժնետերերին, ներքին աուդիտի անդամներին և Ընկերության աուդիտն իրականացնող անձին (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում) պատվիրված նամակներ ուղարկելու կամ անձամբ հանձնելու կամ էլեկտրոնային փոստով առաքելու ձևը:
Ընկերությունը պարտավոր է Ժողովի գումարման մասին իր բաժնետերերին սույն կետով սահմանված կարգով ծանուցել Ժողովի գումարման օրվանից առնվազն 10 օր առաջ:
Ժողովներում նախագահում է Խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Ժողովը նախագահում է Ժողովին ներկա բաժնետերերից ամենատարեցը, եթե Ժողովի գումարման մասին որոշմամբ այլ անձ նշանակված չէ:

11.5.Ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

11.5.1. Կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը

11.5.2. Ընկերության լուծարման կամ վերակազմակերպման վերաբերյալ որոշման կայացումը, ներառյալ՝ լուծարմանը հավասարեցված իրադարձությունների (միաձուլում, միացում, ակտիվների հիմնական մասի օտարում) հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը և լուծարային հաշվեկշիռների հաստատումը (ամփոփ միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը);

11.5.3. Կարգավորվող շուկայում Ընկերության բաժնետոմսերի ցուցակման (IPO), ինչպես նաև դրա ժամկետների, կառուցվածքի և գնի կամ որևէ այլ գործողության, որը հանգեցնում է Ընկերության բաժնետոմսերի **նախնական հրապարակային առաջարկին** (IPO) կամ երրորդ անձանց Ընկերության **առևտրային վաճառքին (օտարմանը)**, վերաբերյալ որոշման կայացումը;

d) agenda of the General meeting of shareholders,

e) the procedure for familiarizing shareholders with information and materials on issues discussed at the meeting, which must be presented to shareholders during the preparation of the meeting:

11.4. The order of informing about General Meeting of Shareholders is sending of ordered letter or hand-over delivering or delivering via e-mail to Shareholders, members of internal audit and external audit (if his conclusion is present in materials of the Meeting).

The Company shall inform its Shareholders of convening General Meeting in order stated in this point no less than 10 days before the Meeting.

General Meetings of Shareholders are presided by President of Board of Directors. At the absence of President General Meeting is presided by elder of present Shareholders if there isn't assigned any other person in resolution of convening the Meeting.

11.5. The exclusive capacity of the General Meeting includes the matters of:

11.5.1.Approval of changes of the Charter, additions and amendments, or the new version of Charter;

11.5.2. Resolution on liquidation or reorganization, including deemed liquidation events (merger, accession, disposal of substantial assets), appointment of the liquidation committee and approval of liquidation balance sheets (consolidated statement, interim and final liquidation balance-sheets);

11.5.3 Approval of listing on a regulated market (IPO), including the structure, timing, and pricing details or any other action leading to an initial public offering or any trade sale of the Company;

11.5.4. Ընկերության գործարար մոդելի փոփոխությանը հանգեցնող նոր նախագծերի մեկնարկի հաստատումը;

11.5.4. Approval of new projects that alter the Company's business model;

11.5.5. Խորհրդի անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

11.5.5. election of Board members and early termination of their powers. The issue of electing members of the Board may be considered at an extraordinary meeting if the latter has decided on the early termination of the powers of the Board or its individual members;

11.5.6. հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,

11.5.6.Establishment of the maximum amount of authorized shares;

11.5.7. բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,

11.5.7. Increase of the charter capital through increasing the nominal value of the shares or via placement of additional shares;

11.5.8. տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը;

11.5.8.Decrease of the authorized capital through decreasing face value of the shares, reducing total amount of shares, also redemption and pay off or decrease of the face value of shares;

11.5.9. Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում;

11.5.9.Purchase and pay off of placed shares;

11.5.10. Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը և վարձատրության չափի սահմանումը;

11.5.10. Approval of the nominee for the invited external audit and determination of amount of compensation;

11.5.11. Ընկերության Գործադիր տնօրենի նշանակումը և լիազորությունների դադարեցումը՝ Բաժնետիրական համաձայնագրով սահմանված թեկնածուների առաջադրման կարգի համաձայն.

11.5.11. Appointment and termination of the Executive Director according to the nomination procedure set forth in the Shareholders' Agreement;

11.5.12. Ընկերության աշխատակիցների բաժնետիրացման ծրագրի հաստատումը,

11.5.12. Approval of the Employee stock ownership plan,

11.5.13. Շահութաբաժինների բաշխման վերաբերյալ որոշման կայացումը, եթե այն շեղվում է հաստատված Շահութաբաժնային քաղաքականությունից:

11.5.13. Resolution on dividend distribution if it deviates from the approved Dividend Policy;

Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների

Approval of the Company's annual reports, balance sheets, profit and loss account, distribution of profits and losses, adoption of the decision on the payment of annual dividends and approval of the amount of annual dividends are discussed exclusively in the annual meetings. If the annual meeting has not been held within the specified

վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումըքննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Եթե սահմանված ժամկետում տարեկան ժողովը տեղի չի ունեցել, ապա արտահերթ ժողով կարող է հրավիրվել միայն Ընկերության լուծարման կամ սույն ենթակետում նշված հարցերը քննարկելու համար: Նշված հարցերով հրավիրված արտահերթ ժողովում այլ հարցեր քննարկվել չեն կարող, բացառությամբ սույն ենթակետում նշված հարցերով կայացված որոշումներով պայմանավորված կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքերի,

period, then an extraordinary meeting may be convened only to discuss the liquidation of the Company or the matters specified in this sub-clause. Other issues cannot be discussed at the extraordinary meeting called for the mentioned issues, except for the cases of decrease of the charter capital caused by the decisions made on the issues mentioned in this subsection.;

11.5.14. բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը

11.5.14. Reduction (split) and increase (consolidation) of face value of securities;

11.5.15. խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը;

11.5.15. Concluding major deals referring to Company's property;

11.5.16. Ընկերության կողմից դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը կամ դրանց մասնակցությունը,

11.5.16. Creating or participation in daughter companies and subsidiary enterprises;

11.5.17. Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող այլ արժեթղթերի նկատմամբ Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,

11.5.17.Adopting a decision not to apply the Company's shareholders' preemptive rights to the Company's shares or other securities convertible into shares,

11.5.18. ժողովի վարման կարգի հաստատումը:

11.5.18.Approval of the order of the meeting.

11.6 Ժողովը իրավունք ունի քննարկել և որոշումներ ընդունել նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Օրենքով ու Կանոնադրությամբ Ժողովի իրավասությանը պատկանող ցանկացած հարցի շուրջ:

11.6. The General Meeting is entitled to deliberate and make resolutions on any issue, according to the Law of the Republic of Armenia "On Joint Stock Companies", the Law of the Republic of Armenia "On the Securities Market", the Law and the Charter.

11.7 Սույն Կանոնադրության 11.5-րդ կետով սահմանված Ժողովի բացառիկ իրավասության հարցերով որոշումներն ընդունվում են Ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների **առնվազն 75%-ով (որակյալ մեծամասնությամբ)**, եթե սույն Կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

11.7. Resolutions on matters of the exclusive competence of the General Meeting prescribed in Clause 11.5 above shall be adopted by **at least 75% (seventy-five percent)** of the votes of the shareholders holding voting shares and participating in the Meeting, unless provided otherwise herein.

Ի շեղումն վերոնշյալի՝ Կանոնադրության 11.5.4 կետով նախատեսված հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են Ընկերության բոլոր բաժնետերերի **միաձայնությամբ (100% կողմ ձայներով)**:

Notwithstanding the above, resolutions on matters prescribed in **Clause 11.5.4** shall be adopted by the **unanimous consent (100% affirmative votes)** of all Shareholders of the Company.

Սահմանված ձայների քանակի խախտմամբ ընդունված որոշումները չունեն իրավաբանական ուժ և չեն հանգեցնում իրավական հետևանքների Ընկերության կամ երրորդ անձանց համար:

Any resolution adopted in violation of the voting thresholds established in this Clause shall be considered null and void and shall not create any legal consequences for the Company or third parties.

Բաժնետերերի ընդհանուր ժողովում որոշումների կայացման անհնարինության (փակուղային իրավիճակների) հետ կապված հարցերը կարգավորվում են Բաժնետիրական համաձայնագրով: Փակուղային իրավիճակի առաջացման դեպքում Կողմերը գործարկում են դրանց լուծման՝ Բաժնետիրական համաձայնագրով սահմանված մեխանիզմները (բանակցություններ/միջնորդություն, բաժնետոմսերի գնման իրավունք (Call Option) կամ լուծարում):

Matters relating to Deadlocks in the General Meeting are governed by the Shareholders' Agreement. In the event of a Deadlock, the Parties shall trigger the resolution mechanisms (Mediation, Call Option, or Liquidation) defined therein.

11.8. Ժողովում ձայնի իրավունքից օգտվում են հասարակ (սովորական) բաժնետոմսեր ունեցող բաժնետերերը:

11.8. The right of voting at the General Meeting shall be exercised by the holders of the common shares.

11.9. Ժողովի կողմից ընդունված որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները պետք է հաղորդվեն ընկերության բաժնետերերին (ըստ պահանջի) 45 օրվա ընթացքում:

11.9. Information about the resolutions of the General Meeting and the results of voting shall be delivered to the Shareholders (on demand) within 45 days.

11.10. Բաժնետերն իրավունք ունի դատական կարգով բողոքարկել Օրենքի, այլ իրավական ակտերի և կանոնադրության պահանջների խախտմամբ ժողովի ընդունած որոշումը:

11.10. The shareholder has the right to judicially appeal the decision adopted by the meeting in violation of the requirements of the Law, other legal acts and the charter.

11.11. Ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

11.11.The following have the right to participate in the meeting:

ա) Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը (անվանատերերը)՝ իրենց պատկանող բաժնետոմսերի դասին, քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով.

a) Shareholders (name holders) owning common (ordinary) shares of the Company with the number of votes corresponding to the class, number and nominal value of the shares they own.

բ) Օրենքով կամ Կանոնադրությամբ նախատեսված դեպքերում Ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը (անվանատերերը)՝ իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի դասին, քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով.

b) In the cases provided by the Law or the Charter, the shareholders (name holders) who are the owners of the Company's preference shares, with the number of votes corresponding to the class, number and nominal value of the preference shares they own.

գ) Ընկերության բաժնետեր չհանդիսացող խորհրդի և գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.

c) Members of the board and executive body who are not shareholders of the company, with the right of consultative vote.

դ) Ընկերության աուդիտն իրականացնող անձը (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում):

d) The person conducting the audit of the company (if his conclusion is available in the materials of the convening meeting).

11.12. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Խորհրդի կողմից սահմանված ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:
Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան ժողով գումարելու մասին որոշման ընդունումը և ավելի ուշ, քան ժողովի գումարումից 60 օրից ավելի:
Եթե ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում է ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ:

11.12. The list of shareholders entitled to participate in the meeting is compiled as of the date set by the Board, based on the data of the Company's shareholders' register.

The year, month, and date of compiling the list of shareholders entitled to participate in the meeting cannot be set earlier than the adoption of the decision to convene the meeting and later than more than 60 days after the meeting is convened.

If the meeting is convened by remote voting, the year, month, and date of compiling the list of shareholders entitled to participate in it is set at least 35 days before the date of convening the meeting.

11.13. Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը իրականացնում է Խորհուրդը:

11.13. The Board of Directors shall manage the current activity of the Company.

11.14. Ընկերության Խորհուրդը կազմված է 7 (յոթ) անդամից: Խորհրդի անդամներն ընտրվում են Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից 1 (մեկ) տարի ժամկետով: Խորհրդի անդամների ընտրությունն իրականացվում է Օրենքով և **Բաժնետիրական համաձայնագրով սահմանված թեկնածուների առաջադրման և քվեարկության կարգի համաձայն**: Խորհրդի անդամների ընտրությունը կարող է իրականացվել հասարակ կամ գումարային (կումուլյատիվ) քվեարկության միջոցով:

11.14. The Board of Directors of the Company is composed of 7 (seven) members. Members of the Board shall be elected by the General Meeting for a period of 1 (one) year. The election of Board members shall be conducted **in accordance with the nomination and voting procedures established by the Law and the Shareholders' Agreement**. Elections may be held through regular or cumulative voting.

Խորհրդի նիստերը կարող են անցկացվել ինչպես անդամների համատեղ ներկայությամբ, այնպես էլ հեռահաղորդակցության կապի միջոցների կիրառմամբ (ZOOM կամ տեսաձայնային կապի այլ միջոցներ), որոնք հնարավորություն են տալիս իրական ժամանակում նույնականացնել նիստի մասնակիցներին և ձայնագրել նիստի ընթացքը: Խորհրդի իրավասությանը պատկանող հարցերը կարող են հաստատվել նաև հեռակա քվեարկության (հարցման) կարգով՝ գրավոր որոշման ստորագրման կամ էլեկտրոնային փոստի միջոցով, եթե որոշումը ստորագրվել է Խորհրդի բոլոր անդամների կողմից:

Meetings of the Board of Directors may be held in person or via electronic means of communication (ZOOM or other audio-visual platforms) that allow for real-time identification of participants and mandatory recording of the proceedings. Matters within the Board's competence may be approved by a written resolution (in absentia), including via email, provided such resolution is signed by all members of the Board.

Խորհրդի նիստերն անցկացվում են Ընկերության գտնվելու վայրում, եթե Խորհրդի անդամների մեծամասնությունը այլ վայրի վերաբերյալ համաձայնություն չեն տվել:

Meetings of the Board of Directors shall be held at the Company’s registered office, unless otherwise agreed by a majority of the Board members.

11.15.Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը՝

11.15. The exclusive capacity of the Board of Directors includes the issues of:

11.15.1 Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների (ռազմավարության) սահմանումը, բյուջեի և տարեկան ծախսերի պլանի, ինչպես նաև դրանցում կատարվող փոփոխությունների

11.15.1. Determination of the Company's business strategy, approval of the budget and annual expenditure

հաստատումը. ռիսկերի կառավարման քաղաքականության սահմանումը;

11.15.2. Ընկերության բաժնետերերի տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարումը, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի,

11.15.3. Ժողովի օրակարգի հաստատումը,

11.15.4. ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ,

11.15.5. գույքի շուկայական արժեքի որոշումը՝ Օրենքով սահմանված կարգով,

11.15.6. Կանոնադրության փոփոխությունների կամ Ընկերության վերակազմակերպման վերաբերյալ որոշումների նախագծերի նախնական հաստատումը և Ժողովի քննարկմանը ներկայացումը;

11.15.7. Համապատասխանության ընթացակարգերի մշակում, հաստատում, ներդրում և վերահսկողություն;

11.15.8. Ընկերության ներքին աուդիտի անկախ ստորաբաժանման ղեկավարի (անդամների) ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը;

11.15.9. Ընկերության ներքին կանոնակարգերի հաստատումը;

11.15.10. Խորհրդին կից աուդիտի հանձնաժողովի ձևավորումը;

11.15.11. Պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը;

11.15.12. Կանոնադրական կապիտալի ավելացման, բաժնետոմսերի դասի կամ իրավունքների փոփոխման, ինչպես նաև աշխատակիցների բաժնետիրացման ծրագրերի (ESOP) վերաբերյալ որոշումների նախագծերի հաստատումը և Ժողովի քննարկմանը ներկայացումը;

11.15.13. Շահութաբաժինների վճարման, բաժնետոմսերի ձեռքբերման (հետգնման), բաժնետոմսերի բաժանման (սպլիտ), շահութաբաժինների տեսքով բաժնետոմսերի տեղաբաշխման կամ շահույթի այլ ձևով բաշխման վերաբերյալ որոշումների նախագծերի **նախնական հաստատումը** և Ժողովի քննարկմանը ներկայացումը:

plans, and any amendments thereto; definition of the risk management policy;

11.15.2.convention of the annual and extraordinary Meetings of the Shareholders, except the cases provided by the Law;

11.15.3.approval of the agenda of the Meetings of the Shareholders;

11.15.4. confirmation of the year, month and date of compiling the list of shareholders entitled to participate in the meetings, as well as the resolution of all issues related to the preparation and convening of the meetings,

11.15.5. valuation of the market price of the property;

11.15.6 Preliminary approval of draft resolutions regarding Charter amendments or reorganization of the Company for submission to the General Meeting;

11.15.7 Development, approval, implementation and control over compliance procedures;

11.15.8. Election of the head (members) of the independent internal audit department of the Company and early termination of his/her powers;

11.15.9. Approval of the Company’s internal regulations;

11.15.10.The formation of the audit committee attached to the Board;

11.15.11.Distribution of bonds and other securities;

11.15.12. Preliminary approval of draft resolutions on increasing Charter Capital, changing share classes/rights, or implementing employee stock option plans for submission to the General Meeting;

11.15.13 Preliminary approval of draft resolutions on dividend payments, share redemption, share splits, share dividends, or any other distribution of profit for submission to the General Meeting of Shareholders.

11.15.14. **Փոխկապակցված անձանց** (այդ թվում՝ բաժնետերերի, տնօրենների կամ աշխատակիցների) հետ ցանկացած փոխառության, վարկի կամ այլ գործարքի կնքման հաստատումը, բացառությամբ Ընկերության բնականոն գործունեության ընթացքում կնքվող գործարքների և աշխատակիցների բաժնետիրացման ծրագրով նախատեսված դեպքերի.

11.15.14. Approval of any loan, advance, or transaction with any Affiliate or Related Party, except if undertaken in the ordinary course of business or under an approved employee stock plan;

11.15.15. Ընկերության պահուստային հիմնադրամի ստեղծումը և օգտագործումը,

11.15.15. Rendering decisions for the creation of Reserve Funds and on utilization thereof;

11.15.16. Խորհրդի լիազորությունների պատվիրակման վերաբերյալ որոշումների կայացումը.

11.15.16. Decision on any delegation of powers of the Board of Directors;

11.15.17. Այլ ընկերություններում, ձեռնարկություններում կամ իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում բաժնեմասերի կամ բաժնետոմսերի ձեռքբերման վերաբերյալ որոշումների կայացումը, եթե այդ իրավասությունը Ժողովի կողմից պատվիրակվել է Խորհրդին;

11.15.17. Decision on the acquisition of shares or equity interest in another company or legal entity, if delegated to the Board by the General Meeting;

11.15.18. **10,000 (տասը հազար) ԱՄՆ դոլար** գերազանցող վարկային միջոցների ներգրավման, ինչպես նաև Ընկերության բնականոն գործունեության շրջանակներում **50,000 (հիսուն հազար) ԱՄՆ դոլարը** գերազանցող ցանկացած այլ գործարքի կնքման հաստատումը.

11.15.18 Approval of raising loan financing exceeding **USD 10,000**, and other ordinary course transactions exceeding the **USD 50,000**;

11.15.19. Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,

11.15.19. approval of the inner documents governing the activity of the management bodies;

11.15.20. այլ կազմակերպություններին մասնակցության մասին որոշման ընդունումը, եթե այդ մասնակցությունը իրենից խոշոր գործարք չի ներկայացնում,

11.15.20. .resolutions concerning the participation in other entities if it is not a major deal;

11.15.21. Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը,

11.15.21.establishment of separate subdivisions and institutions of the Company, termination of their activities, affirmation of their Charters,

11.15.22. Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված այլ գործարքների կնքումը՝ Օրենքի VIII.1-ին գլխով նախատեսված դեպքերում;

11.11.22. Conclusion of other transactions related to the acquisition or alienation of the Company's property, in cases provided for in VIII.1section of the Law.

11.15.23. Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը;

11.15.3. Confirmation of the administrative structure of the Company, the staff list, job descriptions;

11.15.24. հաստիքացուցակի հաստատումը,

11.15.24.approval of the staff list;

11.15.25. ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,

11.15.25. approval of the estimate of annual expenses and approval of their execution;

11.15.26. Օրենքով նախատեսված հարցերը Ժողովի քննարկմանը ներկայացնելը,

11.15.26. Submitting the issues provided for by the Law to the General meeting for discussion,

11.25.27. Օրենքի IX գլխով նախատեսված գործարքների կնքումը,

11.25.28. Օրենքով և Կանոնադրությամբ Խորհրդի իրավասությանը վերապահված այլ հարցերի լուծումը:

11.15.27.Conclusion of transactions stipulated by section IX of the Law,

11.15.28. resolution of any issues, reserved under the Law and this Charter to the discretion of the Board of Directors.

11.16. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն, ընդ որում ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:

Այն դեպքում, երբ Խորհուրդը նույն հարցի վերաբերյալ 2 (երկու) կամ ավելի անգամ անընդմեջ չի ընդունում որոշում, տվյալ հարցը կարող է փոխանցվել ժողովի քննարկմանը և որոշմանը:

11.16. Resolutions of the Board of Directors shall be made by simple majority vote of the members present at the Meeting. While voting each member of the Board shall have one vote, at that in the case of equal division of votes the Chairman's vote is casting.

In case of the failure of the Board of Directors to pass a decision on the same subject matter for more than 2 (two) consecutive occasions, such matter may be delegated to the General Meeting of Shareholders.

11.17. Խորհրդի նախագահի և Գործադիր տնօրենի պաշտոնները չեն կարող համատեղվել:
Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի կողմից, Խորհրդի անդամների կազմից՝ Խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ:
Խորհրդի նախագահը չի կարող Ընկերությունում այլ վճարովի պաշտոն զբաղեցնել, բացառությամբ այն դեպքի, երբ Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները խորհրդի որոշմամբ կատարում է խորհրդի անդամներից մեկը:

11.17. The offices of Chairman of Board of Directors and Executive Director cannot be combined.Chairman of the Board of Directors shall be elected by and among the members of the Board by the majority vote of the members. The Chairman of the Board may not hold any other paid position in the Company, except for the case when, in the absence of the Chairman of the Board, his duties are performed by one of the members of the Board by the decision of the Board.

11.18.Խորհրդի նախագահը՝

11.18.1.կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,

11.18.2.գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք,

11.18.3.կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,

11.18.4.նախագահում է Ժողովներում:

11.18. Chairman of the Board of Directors shall:

11.18.1.organize the works of the Board;

11.18.2.hold and preside at the Meeting of the Board;

11.18.3.organize making protocols of the Meetings;

11.18.4.presides in Meetings.

11.19. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Գործադիր տնօրենը:

11.19. The current business of the Company shall be managed by the Executive Director.

11.20. Գործադիր տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի Ժողովի և Խորհրդի բացառիկ իրավասությանը վերաբերվող հարցերից: Գործադիր տնօրենը կազմակերպում է Ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը, հաշվետու է նրանց և իրավունք չունի ինչպես Ժողովի, այնպես էլ Խորհրդի համար պարտադիր որոշումներ կայացնելու:

11.20. Executive Director may solve any problem besides those being in the sole discretion of the General Meeting or the Board. The Executive Director shall organize the implementation of the decisions of the General Meeting or the Board, is accountable to them and shall have no right of making actions mandatory for the General Meeting or the Board. The Executive Director shall act

Գործադիր տնօրենը պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող Ընկերության:

conscientiously and reasonably, for the benefit of the Company that he represents.

11.21. Գործադիր տնօրենը՝

11.21. The Executive Director shall:

11.21.1.իրականացում է Ընկերության ամենօրյա գործառնական գործունեությունը, տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Ընկերության անունից,

11.21.1. Conduct of day-to-day operational activity of the Company, manage the Company's property, financial means included, implements transactions on behalf of the Company;

11.21.2.ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,

11.21.2.represent the Company within and without RA in relations with third parties;

11.21.3. հանդես է գալիս Ընկերության անունից առանց լիազորագրի, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ;

11.21.3. binds the Company and act without Power of Attorney;

11.21.4.տալիս է լիազորագրեր,

11.21.4. issue Powers of Attorney;

11.21.5. սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին, կնքում է աշխատանքային պայմանագրեր,

11.21.5. in conformity with the procedure provided by the law admit and dismiss the employees, conclude employment contracts;

11.21.6.Ընկերության բնականոն գործունեության շրջանակներում կնքում է 20,000 (քսան հազար) ԱՄՆ դոլարը չգերազանցող գործարքներ (կամ փոխկապակցված գործարքների շարք), ինչպես նաև 20,000 (քսան հազար)-ից մինչև 50,000 (հիսուն հազար) ԱՄՆ դոլարին չափով գործարքներ՝ Ֆինանսական տնօրենի նախնական գրավոր համաձայնության առկայության դեպքում:

11.21.6. Executes transactions in the ordinary course of business (including a series of related transactions) in an amount up to USD 20,000, as well as transactions from USD 20,000 to USD 50,000 subject to the preliminary written approval of the Chief Financial Officer.

11.21.7. բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ տարադրամային) և այլ հաշիվներ,

11.21.7.open settlement and other accounts with the banks in any currency;

11.21.8. Ընկերության Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության ներքին կանոնակարգերը;

11.21.8 Submits the internal regulations of the Company to the Board of directors for approval;

11.21.9. Ընկերության Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության վարչակազմակերպչական կառուցվածքը և հաստիքացուցակը:

11.21.9 Submits the administrative structure and the staff list of the Company to the Board of Directors for approval.

11.21.10. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

11.21.10.within the frames of his powers issue orders, instructions and control their performance;

11.21.11. աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ;

11.21.11. discipline or award the employees;

11.21.12. Ղեկավարում է Ընկերության ընթացիկ գործունեությունը և որոշումներ է կայացնում բոլոր այն

11.21.12. Manages the day-to-day activities of the Company and adopts decisions on all matters that do not

հարցերի վերաբերյալ, որոնք Օրենքով կամ սույն Կանոնադրությամբ չեն պատկանում Բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ Խորհրդի բացառիկ իրավասությանը;

11.22. Ժողովի որոշմամբ Ընկերության գործադիր մարմնի (ինչպես միանձնյա, այնպես էլ կոլեգիալ) լիազորությունները պայմանագրով կարող են տրվել այլ առևտրային կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ (կառավարչի):

fall within the exclusive competence of the General Meeting of Shareholders or the Board of Directors under the Law or this Charter.

11.22. Following the resolution of the General Meeting the powers of the executive body may be conferred on a professional manager (entity or a private person) on contractual basis.

12. Ընկերության գործունեության վերահսկումը

12.1. Ընկերության գործունեության վերահսկումն իրականացնելու համար Խորհուրդն ընտրում է Ներքին աուդիտ: Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Ընկերության կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներն ու աշխատակիցները, ինչպես նաև վերջիններիս հետ փոխկապակցված անձինք: Ներքին աուդիտը կարող է կազմված լինել մեկ անձից:

12.2.Ներքին աուդիտի գործունեության կարգը սահմանվում է Խորհրդի կողմից հաստատվող ներքին փաստաթղթով՝ ներքին աուդիտի անկախ ստորաբաժանման գործունեության կանոնակարգով:

12.3.Ներքին աուդիտը՝

12.3.1. հսկողություն է իրականացնում Ընկերության ընթացիկ գործունեության և ռիսկերի նկատմամբ,

12.3.2. ստուգում է Ընկերության գործունեության համապատասխանությունն օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով, կարգավորվող շուկայի կանոններով, Ընկերության գործունեության կանոններով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին,

12.3.3. տալիս է եզրակացություններ և ներկայացնում առաջարկություններ իրավասու կառավարման մարմնի ներկայացրած և այլ հարցերի վերաբերյալ:

12.4.Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:

12.5.Ներքին աուդիտը պարտավոր է հայտնել ֆ տնօրենին, Խորհրդին, համապատասխան կարգավորվող շուկայի օպերատորին և Կենտրոնական բանկին Ընկերության կողմից օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված պահանջների ցանկացած

12. Control of the company’s activity

12.1. For the purpose of controlling its financial activity the Board of Directors of the Company elects an Internal Audit Committee of the Company.Any person that is a member of executive body, other chief or employee, also an affiliated with the latter persons, cannot be a member of internal audit. An internal audit can consist of one person.

12.2. The work of the Internal Audit Committee (auditor) shall be governed by the Regulations of Internal Audit Committee (auditor) approved by the Board of Directors.

12.3. Internal audit:

12.3.1.controls Company's current activity and risks;

12.3.2.examine the compliance of the Company’s activity with the law, legal acts based on the law, rules of regulative market, Company's activity rules and requirements stated by another legal deeds;

12.3.3.gives conclusions and presents suggestions on issues presented by the relevant management body and other issues.

12.4.Issues that are authorities of internal audit cannot be transferred to management bodies of the Company or other persons.

12.5.Internal audit shall inform Executive Director, Board, corresponding operator of regulative market and Central Bank about any violation of law, requirements of other legal acts made by the Company, also any considerable damage of Clients interests, in 5 business

խախտման, ինչպես նաև հաճախորդների շահերին հասցված ցանկացած էական վնասի մասին՝ դրանց հայտնաբերման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում:
Ներքին աուդիտը օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում, պարտավոր է դրանք ներկայացնել Խորհրդին՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:
Ներքին աուդիտի պահանջով նրան պետք է ներկայացվեն Ընկերության գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:

12.6.Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը կարող է ներգրավել աուդիտն իրականացնող անձի՝ աուդիտորի (կազմակերպության կամ ֆիզիկական անձի՝ արտաքին աուդիտ), որը գույքային շահերով կապված չէ Ընկերության կամ նրա բաժնետերերի հետ:
Ընկերության աուդիտն իրականացնող անձն Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման արդյունքում ներկայացնում է գրավոր եզրակացություն:
Ընկերության ամենամյա ֆինանսական հաշվետվության վերստուգումը կարող է կատարվել նաև նրա բաժնետերերից յուրաքանչյուրի պահանջով: Այս դեպքում վերստուգումը կատարվում է այն պահանջող բաժնետիրոջ հաշվին:
Ընկերության աուդիտն իրականացնող անձը հաստատվում է Ժողովի կողմից, իսկ Խորհուրդը որոշում է աուդիտն իրականացնող անձի ծառայությունների համար վճարվող գումարի չափը:
Ընկերության գործունեության վերստուգումն այն բաժնետերերի պահանջով, որոնց հանրագումար բաժինը կանոնադրական կապիտալում կազմում է տասը և ավելի տոկոս, պետք է անցկացվի ցանկացած ժամանակ:

days from the moment of revelation.

In case of revelation of violations of law and other legal acts, the Internal audit shall inform theBoard about it simultaneously offering arrangements for dispose of violation and its recur in future.

By the requirement of Internal Audit all documents, materials and explanations should be transferred to Internal Audit.

12.6. In order to verify the financial and economic activity of the Company, the Company may invite an auditor (an organization or individual - external audit), who is not related to the Company or its shareholders by property interests. As a result of the examination of the financial activity of the Company the invited auditor shall submit his written opinion.

Audit of the financial activity of the Company may be also performed on the request of any Shareholder of the Company. In this case the expenses connected with the audit shall be carried by the shareholder demanding such audit.

The person conducting the audit of the Company is approved by the Meeting, and the Board decides the amount of money paid for the services to the person conducting the audit.

Audit of the Company’s business on the request of a Shareholder(s) holding at least 10% of the share capital of the Company shall be performed once such a request is received.

13. Ընկերության վերակազմակերպումը և լուծարումը

13.Reorganization and liquidation of the company

13.1. Ընկերությունը Ժողովի որոշմամբ կարող է կամովին վերակազմակերպվել կամ լուծարվել: Ընդ որում Ընկերությունը կարող է վերակազմակերպվել բացառապես մեկ այլ ներդրումային ընկերության հետ միացման կամ վերակազմավորման միջոցով:

13.1.The Company may be reorganized or dissolved following the resolution of General meeting of Shareholders. Therewith the Company can be reorganized only via merger with another investment company or transformation.

Ընկերության վերակազմակերպման և լուծարման այլ հիմքերը, ինչպես նաև նրա վերակազմակերպման ու լուծարման կարգը սահմանվում են Օրենսգրքով, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Օրենքով և այլ օրենքներով:

The procedure, terms and conditions of reorganization or dissolution of the Company are provided by the Civil Code, law of Republic of Armenia “On Securities market”, the Law and other laws.

13.2. Ընկերությունն իրավունք ունի վերակազմավորվել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության:

13.2.The Company may be reorganized into Limited Liability Company.

13.3.Ընկերության լուծարումը հանգեցնում է Ընկերության դադարմանը առանց Ընկերության իրավունքների և պարտականությունների իրավահաջորդության կարգով այլ անձանց փոխանցման:

13.3.Dissolution of the Company brings Company's termination without assignation of rights and liabilities of the Company to other persons..

13.4.Ընկերությունն այլ իրավաբանական անձի հետ միացման ձևով վերակազմակերպվելիս վերակազմակերպված է համարվում միացող ընկերության գործունեությունը դադարելու վերաբերյալ ներդրումային ընկերությունների գրանցումների մատյանում գրառման պահից:

13.4.In case of reorganization through merger of companies the Company is considered to be reorganized from the moment of registration of termination of the merged company in State register of legal entities.

13.5 Սույն կանոնադրությունը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով: Հակասությունների դեպքում գերակայում է հայերեն տեքստը:

13.5 This charter are written in Armenian and English. In case of contradictions, the Armenian text prevails.